



*Ադրբեջանական զինվորները ականանետի հետ*

## **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ՉՊԱՏՇՎԱԾ**

**Ամալյա վան Գենթ, 21.02.2021, Լեռնային Ղարաբաղում պատերազմի ավարտից երեք ամիս անց Հայաստանը պայքարում է իր սեփական գոյության համար:**

2020 թ. դեկտեմբերի 11-ին Ադրբեջանն իր մայրաքաղաք Բաքվում հաղթանակի հանդիսավոր շքերթ անցկացրեց: Ուղիղ մեկ ամիս առաջ Մոսկվայի նախաձեռնած զինադադարը լռեցրել էր զենքերը Լեռնային Ղարաբաղում և հաստատել Ադրբեջանի փաստացի հաղթանակը Հայաստանի նկատմամբ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն այժմ կամենում էր այդ հաղթանակը հավուր պատշաճի տոնել: Եվ նա ուզում էր իր ժողովրդին ցույց տալ, որ Ադրբեջանն իր դեկավարության ներքո նոր, փորձված տարածաշրջանային ռազմական տերության է վերածվել: Բեմահարթակում, որը զարդարված էր ծով ադրբեջանական և թուրքական դրոշներով, Ալիևի կողքին նստած էր Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը:

Դիտորդների մեծ մասը համակարծիք է՝ այդ պատերազմն առաջին հերթին թելադրվեց Էրդոդանի Թուրքիայի կողմից: Անկարայի ներկայիս իշխանավորները պատկերացնում են մի Թուրքիա, որի ազդեցությունն Արևելյան Միջերկրածովից Կասպից ծովի վրայով հասնում է մինչև չինական սահմանը: Այդ մեծամոլական խելացնոր ծրագրում Հայաստանի հանդեպ հաղթանակը, որը հնարավոր է դարձնում Ադրբեջանի և Թուրքիայի միջև անմիջական կապը, միայն առաջին փուլն է:

## Ահաբեկում

Հաղթանակի շքերթի ժամանակ երկու պետությունների ղեկավարները հանդիսավոր կերպով հավաստեցին իրենց ժողովուրդների մշակութային և պատմական սերտ կապերը՝ ըստ «երկու պետություն և մեկ ժողովուրդ» նշանաբանի: Իր խոսքում Էրդողանը, բացի այդ, փառաբանեց Էնվերի և Նուրի փաշայի ոգին. «Թո՛ղ այսօր երջանիկ լինեն Նուրի փաշայի, Էնվեր փաշայի և Կովկասի իսլամական բանակի քաջարի զինվորների հոգիները»: Նուրի փաշան 1919 թ. Լեռնային Ղարաբաղում ավերեց այն ժամանակ դեռ բազմամշակութային Շուշի քաղաքի հայկական թաղամասը և սպանեց մինչև 30 000 բնակչի: Իսկ Էնվեր փաշան, որին Էրդողանը միաժամանակ հիշատակեց, 1915 թ. որպես հզոր ռազմական նախարար՝ ցեղասպանության հրաման տվեց, որով Օսմանյան պետությունում իշխող երիտթուրքերն իրենց՝ այն ժամանակ շուրջ երկու միլիոն հայերին վտարեցին կամ սպանեցին, կամ, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ հրեա Էլի Վիգելի խոսքերով, սկսվեց «հոլոքոստ հոլոքոստից առաջ»: Որպես համեմատություն՝ դա կլիներ նույնը, եթե այսօր կանցլեր Անգելա Մերկելը հավերժ հանգստություն մաղթեր Հիտլերի և Այխմանի հոգիներին:

Իր հերթին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը պահանջեց Հայաստանի մայրաքաղաք Երևանը՝ որպես Ադրբեջանի պատմական հող. «Պատերազմի ժամանակ ես ասել եմ, որ մեր երկաթե բռունցքը մարմնավորում է ինչպես մեր միասնությունը, այնպես էլ՝ մեր ուժը: Այդ երկաթե բռունցքը կոտրեց թշնամու ողնաշարը և փշրեց նրա գլուխը: Եթե հայկական ֆաշիզմը երբևէ նորից իր գլուխը բարձրացնի, արդյունքը կլինի նույնը»:

Ադրբեջանը և Թուրքիան միտումնավոր խաղարկեցին հայ բնակչության՝ ցեղասպանության կրկնման վաղեմի երկյուղը և անկաշկանդ դիմեցին ահաբեկման: «Եթե խոհանոցում ուտիճ է ծնվել, դա չի նշանակում, որ խոհանոցը նրան է պատկանում», - հունվարին գրառեց Twitter-ի ադրբեջանցի մի օգտատեր: Դրանով նա նկատի ուներ հայերին, որոնք դարեր ի վեր Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակիչներն են: Իր թվիթերյան գրառման կողքին նա դրեց փոստային մի նոր դրոշմանիշ, որը տպագրել էր Ալիևի կառավարությունը, և որի վրա պատկերված է Լեռնային Ղարաբաղի «ծխահարումը»:

## Շքերթախաղ արդիական պատերազմի համա՞ր

Լեռնային Ղարաբաղի շուրջ երկրորդ պատերազմն սկսվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին, երբ ադրբեջանական զորքերը, Թուրքիայի հանձնարարությամբ՝ հովանավորվելով թուրքական զինուժի և ջիհադիստ վարձկանների կողմից, հարձակվեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև

պատմականորեն վիճելի այդ տարածաշրջանի վրա: Այն ավարտվեց 44 օր անց՝ Հայաստանի նվաստացուցիչ պարտությամբ:

Բրիտանացի կինոռեժիսոր Էմիլ Գեսսենը, որը բոլոր 44 օրերին ֆիլմ էր նկարում Լեոնային Ղարաբաղում, այդ արդյունքը բացատրում է երկու հիմնական գործոններով. հայկական «Ցիվիլնեթ» լրատվական գործակալությանը նա ասաց, որ Ադրբեջանն իր ռազմական անօդաչու թռչող սարքերի և մարտական ռոբոտների շնորհիվ «հենց սկզբից վերահսկել է «the skies»-ը (օդային ինքնիշխանությունը): Հայկական զորամասերն այդ շատ բարձրակարգ մարտական տեխնոլոգիային դիմակայելու քիչ բան ունեին և զոհվել են անպաշտպան կերպով, ինչպես սպանդանոցի կենդանի: Երկրորդ՝ Էմիլ Գեսսենը նշեց, որ Ադրբեջանն իր նավթադոլարների շնորհիվ վերահսկել է տեղեկատվության հոսքը և առավելություն ուներ քարոզչական պատերազմում:

Փաստ է, որ Ադրբեջանն օգտագործել է իր առասպելական նավթային հարստությունն՝ աշխարհաքաղաքական ճնշման լծակներ ստեղծելու համար: Խողովակաշարերի ընդլայնված ցանցը, որը համաշխարհային շուկան ապահովում է Կասպից ծովի բնական գազով և նավթով, առաջացնում է կախվածություններ: Դրանց շարքին կարելի է դասել նաև «Տրանսանատոլիական բնական գազի խողովակաշար»-ը («Transanatolian Natural Gas Pipeline» (TANAP)), որն առանձնապես կարևոր է Եվրոպայի մատակարարման համար: Բացի դրանից՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, ինչպես նաև SOCAR-ի պես նավթային հսկաները և դրանց՝ աշխարհով մեկ սփռված մասնաճյուղերը հայտնի են նրանով, որ առատաձեռն «նվերներով» կարողացել են ձևավորել ուժեղ լոբբիստական իշխանություն և տեղեկատվական հզոր ապարատ: (Շվեյցարիայում նույնպես վարորդները պետք է մտածեն այդ պատերազմի մասին, երբ SOCAR-ի լցակայաններում վառելանյութ են լցնում իրենց ավտոմեքենաների մեջ: *(Հերթապահող խմբագրության նշումը)*։

Փաստ է նաև այն, որ համաշխարհային հանրության մեջ չկար վրդովմունք, ոչ իսկ՝ արժանահիշատակ որևէ արձագանք: Մամուլը ցավալիորեն վերապահ դիրք բռնեց և միօրինակ կրկնում էր՝ «Հայաստանը և Ադրբեջանը երկուստեք մեղադրում են միմյանց» նախադասությունը, կարծես խոսքն ագրեսիվ հարձակողական պատերազմի մասին չէր: Միջազգային դիվանագիտությունը նույնպես վարվեց մամուլի պես: Այն հաստատում էր Բաքվի մոտեցումը, ըստ որի՝ միջազգային իրավունքի տեսանկյունից Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս է:

1921 թ. Ստալինը Լեոնային Ղարաբաղը միացրել էր Ադրբեջանին: Ղարաբաղի բնակչությունը՝ անհիշելի ժամանակներից ի վեր գլխավորաբար հայազգի, դեռ Խորհրդային միության փլուզումից առաջ, սակայն, պայքարում էր իր անկախության համար: Լեոնային Ղարաբաղի շուրջ առաջին պատերազմում (1991-1994 թթ.) հայկական զորքերն իրենց վերահսկողության տակ վերցրին Լեոնային Ղարաբաղը, ինչպես նաև՝ հարակից ադրբեջանական յոթ շրջանները: Այդ ժամանակից ի վեր Երևանը անարդյունք կերպով ձգտում էր հասնել Լեոնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը և համառորեն մերժում էր, նախքան բաղձալի ճանաչումը, ադրբեջանական յոթ շրջանների վերադարձումը: Եվ, այսուհանդերձ, այդ փաստարկը բավարար է՝ կործանարար հարձակողական պատերազմը և, նմանապես, ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավունքի կոպիտ խախտումը լռելյայն հանդուրժելու համար:

### **Թվային դիտողներ ճակատային գծում**

44 օր տևած ուժգին բախումների ընթացքում երկու կողմերը գանգատվել են ռազմական ծանր հանցագործություններից: Կանադացի լրագրող Ֆին դե Պենսիեռն անցյալ նոյեմբերին իր ուղևորության ընթացքում ուղեկցում էր ֆրանսիացի բժիշկների մի թիմի, որոնք Հայաստանում բուժում էին «սպիտակ ֆոսֆոր» քիմիական զենքից տուժածներին: Ադրբեջանն այդ թանկ, խիստ թունավոր քիմիական զենքն ակնհայտորեն գանգվածային կերպով գործադրել էր Լեոնային Ղարաբաղի հարավում:

Ըստ Ֆին դե Պենսիեռի՝ մի պատճառ էլ էր այս պատերազմն առանձնացնում բոլոր նախորդներից. այս անգամ համացանցը հնարավորություն տվեց «ամբողջ բնակչությանը թվային եղանակով լինել ճակատային գծում և դառնալ թշնամու կողմից կատարվող վայրագությունների անմիջական վկան»: Հայաստանի հայերը, սակայն նաև Լոս Անջելեսի կամ Փարիզի սփյուռքահայերը կարողացան միաժամանակ հետևել, թե ինչպես էին ուժեղացնում և ավերվում Լեոնային Ղարաբաղի քաղաքներն ու գյուղերը, ինչպես նաև՝ դրանց ենթակառուցվածքները: Նրանք նաև կարողացան թվային եղանակով հետևել, թե ինչպես էին ադրբեջանցի զինվորները հայ գերիներին գլխատում, խոշտանգում կամ այլակերպում նրանց դիակները: Ահաբեկումը, որպես արտաքսման միջոց, կարծես թե այս երկրորդ պատերազմի ռազմավարության առանցքային մասն էր:

Փետրվարի 12-ին թուրքական ընդդիմադիր «Ahval» ինտերնետային կայքը հրապարակեց մի ցուցակ՝ այն մարդկանց անուններով, որոնք, ենթադրաբար, պատասխանատու են Լեոնային Ղարաբաղում մարդու իրավունքների լուրջ խախտումների համար: Ցուցակը

գլխավորում է Սայֆ Բալուդը կամ Սայֆ Աբու Բաքրը: 2016 թ.ի վեր Բալուդը ղեկավարում է Սիրիայի ազգային բանակի (ՍԱԱ), այսպես կոչված, Համգա-դիվիզիան, որը Թուրքիայի հովանու ներքո մասնակցել էր նաև «Ձիթենու ճյուղ» գործողությանը՝ Հյուսիսային Սիրիայում քրդական Աֆրին ներխուժմանը: Ցուցակը պարունակում է ջիհադիստների ևս մի քանի առաջնորդների անուններ, որոնցի է, օրինակ, Ֆեհիմ Իսան (Իսա ալ-Թուրքմանի): Առնվազն 2015 թ. ի վեր նա ղեկավարում է Սուլթան Սուրադ ՍԱԱ-ստորաբաժանումը և նույնպես մասնակցել է «Ձիթենու ճյուղ» գործողությանը: Աֆրինում նրանք պատասխանատու են համարվում այնպիսի զազրելի հանցանքների համար, ինչպիսիք են բռնաբարություններն ու առևանգումները, բռնի տեղահանությունները, խոշտանգումներն ու մահապատիժները:

Այն, որ ջիհադականները կամ Թուրքիան անմիջական մասնակից են եղել Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողություններին, միշտ հերքվում էր Բաքվի կողմից: Այժմ «Ahval»-ը տեղեկացնում է, որ Լեռնային Ղարաբաղի գործողությունը անձամբ կազմակերպել է Թուրքիայի գաղտնի ծառայության (MIT) ղեկավար Հաքան Ֆիդանը: Նա, անկասկած, Էրդողանի շրջապատի ամենախորհրդավոր ու ամենահզոր դեմքն է: Բացի դրանից՝ թուրք զեներալ-մայոր Գյոքսել Քահյան՝ Թուրքիայի ռազմաօդային ուժերի մատակարարման և սպասարկման 1-ին կենտրոնի պետը, պետք է ղեկավարած լինի թուրքական արտադրության Bayraktar TB2 անօդաչու թռչող սարքերի գործադրումը Լիբիայում և Լեռնային Ղարաբաղում: «Ahval»-ի ցուցակը հիմնված է Կոլումբիայի համալսարանի մի հետազոտության վրա, որը հրապարակվել է «Արցախյան ոճրագործություններ» (“Artsakh Atrocities“) խորագրի ներքո:

### **Հայաստանը՝ հատակին**

Պատերազմը և նվաստացուցիչ պարտությունը Հայաստանը նետել են գոութենական ծանր ճգնաժամի մեջ: Տարածքային կորուստներից բացի՝ երկիրը պետք է հաղթահարի շուրջ 3500 սպանվածների և կրկնակի ավելի հաշմանդամների խնդիրը: Դա շատ բարձր գին է Հարավային Կովկասի ամենափոքրիկ հանրապետության և նրա 2,5 մլն բնակչության համար: Հազարավոր ընտանիքներ, որոնք կորցրել են իրենց ամուսիններին, որդիներին ու հայրերին և այդպիսով՝ իրենց կերակրողներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից 40 000 վտարվածները հայտնվել են դառն աղքատության մեջ: Է՛լ ավելի կարևոր է, որ 44-օրյա պատերազմը հայերից իլեց մինչալժմյան համոզվածությունը, թե Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքը երկրին պաշտպանություն, իսկ նրա սահմանների ներսում՝ ժողովրդին ապահովություն է տրամադրում: Իսկ իր քաղաքական ղեկավարությունն իրեն դրսևորեց որպես բացարձակապես անկարող՝ ինչ-որ կերպ հաղթահարելու ճգնաժամը: Հայերն իրենց համարում են դավաճանված և հուսահատված են:

Պատերազմի ավարտից երեք ամիս անց հայ բնակչությունը վախենում է, որ ապագայում նաև ուրիշ դիկտատորներ կարող են օրինակ վերցնել Ալիևից և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանից՝ փոքրիկ պետություններին պարզապես ռազմական միջոցներով իրենց կամքը պարտադրելու համար: Պատասխանն այն հարցին, թե արդյոք կպատժվե՞ն այս պատերազմի հանցագործությունները, թե՞ կմնան չպատժված, կարող է ուղենշային լինել: Միայն ռազմական բոլոր հանցագործությունների՝ միջազգայնորեն վերահսկվող քննությունը՝ մոտավորապես Հարավսլավիայի դատարանի օրինակով, կկարողանա հայերին ու հայուհիներին ազատել 21-րդ դարում բնաջնջման նպատակ հետապնդող մի պատերազմի կրկին գոհ դառնալու երկյուղից, ինչպես դա եղավ 1915 թ. ցեղասպանության ժամանակ:

*Հրապարակվել է 2021 թ. փետրվարի 21-ին “Infosperber” կայքում՝  
<https://www.infosperber.ch/freiheit-recht/menschenrechte/bleiben-die-kriegsverbrechen-in-berg-karabach-ungesuehnt/>:*